ԳԱՅԱՆԵ ԳԻՆՈՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ Թ. ԲԵՐՆՀԱՐԴԻ «ՄԱՐՈՒՄ: ՄԻ ՕՋԱԽԻ ՔԱՆԴՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

Ժամանակի երևույթը դարեր շարունակ զբաղեցրել է արվեստի ու գեղագիտության բնագավառին առնչվողներին, որոնք գիտակցել են ժամանակի դրական և բացասական դերը: Գեղագետներից ոմանք արվեստագետի գործունեությունը պատկերացրել են որպես ժամանակի դեմ պայքար: Գերմանական գրականության մեջ բազմիցս իր արտահայտությունն է գտել ժամանակը և հիշողությունը, որն ամենից առաջ կապված է գերմանական մտածողության հետ: Ժամանակը կարևոր նշանակություն ունի արձակում, որի դերը հատկապես կարևորել են 20-րդ դարի սկզբի արձակագիրները:

Ավստրիացի ժամանակակից գրող Թ.Բերնհարդի (1931-1989) «Մարում: Մի օջախի քանդում»/1986/ վեպում ժամանակի երևույթը, նրա պրոցեսի երկու կողմերը՝ հիշելն ու մոռանալը կազմում են վեպի առանցքը, վերհիշելն այստեղ արվեստի սկզբնաղբյուր է, իսկ վեպի նյութը՝ ինքնության և ինքնահաստատման կորստի պատճառ՝ պատմության լռության մատնված ժամանակաշրջանը և վանված անցյալն է:

Թ.Բերնհարդի «Մարում: Մի օջախի քանդում» վեպում գլխավոր հերոսը՝ Ֆրանց-Յոզեֆ Մուրաուն հիշողության ծնով պատմում է իր կյանքը: Նա ապրում է հարազատներից հեռու Հռոմում և մի օր ստանում է ծնողների և եղբոր մահը գուժող հեռագիր: Եղբոր մահից հետո նա դառնում է հայրենի Վոլֆսեգի միակ ժառանգորդը: Ավստրիա, Վոլֆսեգ մեկնելուց առաջ նա հիշում է իր մանկությունը, այն դեպքերը, որոնք օտարացրել են նրան ընտանիքից ու հայրենիքից: Ծնողների ու եղբոր թաղումից հետո նա իր ժառանգությունը նվիրում է Վիեննայի հրեական մշակութային ընկերությանը իրեն ճնշող անցյալից ազատվելու համար: Այդ անցյալն ամենից առաջ որոշվված է նացիոնալ-սոցիալիզմի ժամանակաշրջանի ծանր դեպքերով, ապա դրան հետևած նույնքան ճնշող կաթոլիկ եկեղեցու ազդեցությամբ, ինչպես նաև այն գիտակցությամբ, թե ծնողները նացիստների գործակիցներն են եղել այդ տարիներին:

Ինչպես ամեն գործողություն պատմելը նույնպես ժամանակային երևույթ է, որն ըստ գրականագետ Գյունտեր Մյուլլերի ունի երկու կողմ՝ պատմելու ժամանակ, որն այն ժամանակն է, որը պատմողին անհրաժեշտ է իր պատմությունը պատմելու համար և պատմված ժամանակ, որը պատմվածի տևողությունն է:[1]

[1] Martinez, M / Scheffel, M.: Einführung in die Erzähltheorie. München. 1999

Յուրաքանչյուր պատմություն, ինչպես երաժշտությունը, իր ստեղծման համար ժամանակ է պահանջում, որովհետև այնտեղ գործողության հերթականություն է արտահայտվում: Այսինքն պատմվածքի ընդհանրությունը երաժշտության հետ այն է, որ ժամանակը նաև նրա տարրն է: Ժամանակը արձակում պայմանավորում է գործողության ընթացքը, կարող է հանդես գալ պատմության մեջ, այն իմաստով, որ գործողությունը ընթանում է որոշակի ժամանակի մեջ: Եվ վերջապես ժամանակը կարող է լինել նաև արձակի բովանդակությունը, առարկան: Այսպիսով, ժամանակը երեք նշանակություն ունի արձակի համար, առաջին՝ լույս աշխարհ գալու պահը, երկրորդ՝ ցանկացած պատմություն տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում և երրորդ՝ ժամանակն՝ ինքը, դառնում է արձակի քննարկման առարկա:

Երբ դիտարկում ենք «Մարում»-ը ժամանակի արձակում ունեցած դերը հաշվի առնելով՝ վստահ կարող ենք պնդել, որ Բերնհարդն իր վեպը կառուցելիս նկատի է առել նրա երեք հատկությունները: Դա են վկայում վեպում առկա ժամանակի բազմաթիվ նշումները, վեպի ստեղծման ժամանակի վերաբերյալ խոհերը:

Գլխավոր հերոս, առաջին դեմքով պատմող Ֆրանց-Յոզեֆ Մուրաուն վեպի վերջին մասում մտորում է «Մարում» վերնագրով իր ծրագրած երկի մասին, որը գրի առնելը նրանից շատ ժամանակ, մեկ, երկու, գուցե երեք տարի կպահանջի, այդ գործը «գոյության ճգնաժամ» (Մարում, 615) է, որը նրան վախեցնում է, այն նրա հետ է տասնամյակներ շարունակ և արդեն ժամանակն է, որ գրի: Այդ գործը, որը նա «եզակի, հրեշավոր» (Մարում, 615) է անվանում, նա չի կարող մոռանալ: Իր վեպով Մուրաուն ցանկանում է իր անցյալը, մանկության տարիների ծանր հիշողությունը, ծննդավայրը և վերջապես այդ ժամանակը մարել, ոչնչացնել:

«Ես այդ պատմությունը մարում կանվանեմ, քանի որ այդ պատմության մեջ ես կմարեմ փաստորեն ամեն ինչ, ամեն ինչ, ինչ ես գրի կառնեմ այդ պատմության մեջ, կմարվի, իմ ողջ ընտանիքը այնտեղ կմարվի, նրա <u>ժամանակը</u> նրանում կմարվի, Վոլֆսեգը կմարվի իմ պատմության մեջ իմ ձևով...» (Մարում, 201)

Ավգուստինուսը, ժամանակի հասկացությունը դիտարկելիս, հանգել է ժամանակի միավորի միասնության գաղափարին: Նա պարզել է, որ չկա ներկա, անցյալ և ապառնի որպես այդպիսին: Ժամանակածները չեն երևում օբյեկտիվորեն: Եթե անցյալն իսկապես անցյալ է, ապա հնարավոր չէ այլևս նրա մասին խոսել, այն անցած է: Բայց քանի որ հնարավոր է խոսել, ապա այն որոշակի ձևով է անցած, իսկ մյուս ձևով ներկա է: Նույնը ապառնիի և նույնիսկ ներկայի մասին կարելի է ասել: Եվ նա հանգել է եզրակացության, որ կա անցյալի ներկա, ներկայի ներկա և ապառնիի ներկա:

Թ. Բերնհարդի երկը միանում է ժամանակի՝ հիշելու և մոռանալու միասնության, անցյալ, ներկա և ապառնի ժամանակների հարաբերությունը քննարկող գրականությանը, որոնց գլուխգործոցը ֆրանսիացի գրող Մ.Պրուստի «Կորած ժամանակի փնտրտուքը»/1918-27/ վեպն է: «Մարում» վեպը բացող և փակող նախադասությունները, որոնք չափազանց երկար են, տրված են ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով, որն ավելի է շեշտում պատմության մշտական ներկայությունը ներկա ժամանակում, նրա ամեն պահ անցյալ դառնալու հնարավորությունը և ապագայի նրանից կախված լինելը և այսպիսով, չկա ներկա առանց անցյալի, ապագա առանց ներկայի և դրանով առանց անցյալի և, միաժամանակ, անցյալ առանց ներկայի ու ապագայի գիտակցության:

Թ. Բերնհարդի վեպը, որտեղ շատ է կարևորվում ժամանակի գործոնը, ունի ժամանակի բազմաթիվ նշումներ: Համադրելով այդ նշումները պարզում ենք, որ պատմելու, հիշելու ժամանակը տևում է 39 ժամ, պատմող «ես» մահանում է 49 տարեկանում: Այս թվերը հիշեցնում են գերմանական պատմությունը, որի համար կարևոր թվական է 1939-ը, երբ սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը և 1949 թվականը, երբ հիմնադրվեց ԳՖՀ-ն: Սրան է միանում ավստրիական պատմությունը Մուրաուի ծննդյան տարեթվով՝ 1934, երբ Ավստրիայում սոցիալ-դեմոկրատները պարտություն կրեցին, դրանով հող պատրաստեցին նացիստների Ավստրիա մտնելուն և Գերմանիային միացնելուն 1938 թվականին: Այսպիսով, լիովին տեղին է Ու. Վայնցիրլի բնորոշումը, որ «Մարում»-ը «քաղաքական գիրք»[2] է, որը 40 տարի վանված մեղսակցությունը նացիոնալ-սոցիալիզմին իր կոնկրետ անունով է կոչում:

«Մեր ժողովրդի լռելը հազարավոր և տասհազարավոր հանցագործություններից ամենամեծն է այդ հանցանքներից, ասացի ես քույրերին: Այս ժողովրդի լռելը սարսափելի է, այս լռելն էլ ավելի սարսափելի է, քան ինքը հանցագործությունը...»(Մարում, 459,),-ասում է Ֆրանց-Յոզեֆ Մուրաուն:

Այսպիսով՝ կա մի պատմություն, որը միացնում է գերմանացի և ավստրիացի ազգերին: Դա երկրորդ համաշխարհային պատերազմում երկու ազգերի միասնական մեղքն է եվրոպացի հրեաների հանդեպ, որը խոստովանում, և որը բարձրաձայնում է Բերնհարդը:

Ավստրիացի գրող Ինգեբորգ Բախմանը գեղարվեստական ստեղծագործություններում կերպարների, վայրերի ու փողոցների անունների խնդրի մասին ասում է, որ նրանցից կարելի է ճանաչել կերպարներին ու նրանց

---

[2] U.Weinzirl: Bernhard als Erzieher. In: Lützeler, P. M.: Spätmoderne und Postmoderne. Frankfurt Main. 1991. S.192

գործելակերպը, իսկ գրողներից ոմանք, ինչպես Թ. Մանը ուզում են ամեն ինչ անուններից կորզել:[3]

Վեպի համար գործողության վայրի անվան՝ Վոլֆսեգ, ընտրությունը հուշում է հեղինակի ցանկությունը կարդալ իր գործը որպես հիշողության հուշարձան, երկ անցյալի մասին: Վոլֆսեգը բառացի թարգմանելիս կնշանակի գայլի ձու: Հիշեցնենք, որ Վերածննդի ժամանակաշրջանում ժամանակը պատկերված է գայլի, առյուծի և շան գլուխներով, որտեղ գայլը անցյալ, առյուծը ներկա, իսկ շունը ապագա է նշանակում:[4]

Մուրաուն իր անցյալը, որն այնպես հզոր է, որ ներկայի համար տեղ չի թողնում, հիշում է երկու հարթությամբ, դա անցյալն է՝ մանկությունից մինչև ծնողների ու եղբոր մահ, և դա անցյալն է՝ նրանց թաղման ժամանակ, որը նա գրի է առնում իր հիշողությունների ձևով դեպքից մեկ տարի ուշ, ինչպես հուշում է վեպի վերջում Մուրաուի մահվան տարեթիվը: Ժամանակային հեռավորությունը և ապրումների մեկնաբանությունը հեռվից, հեռավորություն են ստեղծում են պատմությունից, անցյալից:

Վեպում ժամանակի տվյալների առատության կողքին հարկ է նշել այն ժամանակի ճշգրիտ պահպանումը, որի ընթացքում հեղինակը հիշում է: Այսպես, առաջին գլուխը սկսվում է ժամը երկուսին և ավարտվում է ժամը հինգին, այսինքն ամբողջ այդ հիշողության պրոցեսը տևում է երեք ժամ: Այս երեք ժամին հետևում է առավոտյան ժամը 5-ին ինքնաթիռով Վիեննա մեկնելու խորհրդածությունը և թվում է հիշելու ժամանակը շրջանակված պիտի լինի, բայց երկրորդ մասը Բերնհարդը սկսում է նույնպես ցերեկվա ժամը երկուսին, որը մի կողմից նրան հատուկ կրկնության ոճն է հուշում, մյուս կողմից կարծես ժամանակը հիշողության հանդեպ կանգ է առել:

Մուրաուն գիտակցում է իր գոյության իմաստի կորուստը և փնտրում է նրա էությունը ոչ թե նրանում, ինչը դեռ չի եղել (ապագայում), այլ նրանում, ինչն այլևս չկա (անցյալում): Սա արտահայտվում է ներկա (իր) և անցած (ծնողների) սերնդի օրինակով, հերոսը փորձում է այն անժամանակության մեջ վերագտնել, որը նրա համար հիշողությունը պիտի հնարավոր դարձնի:

Մուրաուի հիշողությունները որոշ չափով ջնջում են անցյալի ու ներկայի սահմանները, անցյալն այդ հիշողության մեջ մշտապես ներկա է, որը նկարագրվում է ոչ ժամանակային հերթականությամբ: Մանկության, պատանեկության ու հասունության տարիները Մուրաուն չի նշում հերթականության ռիթմով. նա այն նկարագրում է «անցած աշխարհում», որպես վերագտնված ժամանակ ոչ թե հոսելով ու անցնելով, այլ իրեն հատուկ տևականության մեջ: Այսինքն՝ ժամից օրը, օրվանից շաբաթը, շաբաթից ամիս, ամսից տարվա

---

[3] I. Bachmann: Der Umgang mit Namen. In: I. Bachmann: Werke. 4. Band. S. 238-254

[4] F. A. Yates. Gedächtnis und Erinnern. Berlin 1990

եղանակ և այդպես ողջ մանկությունը: Այն ժամանակ, երբ վեպը ներառնող 39 ժամը իր հավերժական շրջանով ներկայացվող ժամանակը իրար է միացնում, այդ ընթացքում միշտ ավելի մեծ ժամանակաշրջան է տեսանելի դառնում, երևում է Վոլֆսեգը որպես «փակ» աշխարհ, որպես տեսարանի միավոր, որտեղ ամբողջ անցածը կրկին կարող է երևալ ամբողջական, չվնասված և թարմ:

Ժամանակի անախրոնիկ դասակարգումները դիտելիս կարծես պատմողը ժամացույցի սլաքը անընդհատ ետ ու առաջ է տանում: Չնայած ժամանակի խառը տվյալներին դրանք համապատասխանում են ժամանակի հաշվարկին և միաժամանակ ակնարկում են հերոսի հոգեկան վիճակը: Այս թվացյալ անախրոնիզմներով և քողարկված ժամանակագրությամբ հեղինակին հաջողվում է ժամանակը իր հոսքի մեջ անտեսանելի դարձնել և ներկայացնել իր ժամանակային ասպեկտներով: Վեպի առաջ ու ետ ճանապարհները ունեն մեկ այլ կարևոր նշանակություն, դրանք ջնջում են ծնունդի ու մահվան որպես ըսկիզբ ու վերջ աքսիոման, դրանք հիշող «եսի» համար տրանսցենդենտային են:

Վեպի սկիզբն ու վերջը, ինչպես ձևի, այնպես էլ ժամանակի տեսանկյունից, համընկնում են: Ժամանակածների փոփոխականությունը առաջին ու վերջին նախադասության մեջ ցույց են տալիս անցյալի մշտական ներկայությունն ու այդ ներկայության գիտակցությունը: Մուրաուն գրում է Հռոմում, ապրում է Հռոմում, ինչպես սկզբում, այնպես էլ վերջում, որով հեղինակը ջնջում է ժամանակների տարբերությունը և հիշողության հանդեպ հեռավորությունը:

Ժամանակը վեպում ցուցադրվում է որպես մարդու անհամեմատելի հատկություն, որտեղ նա իր տեղն ունի, այնտեղ է նրա հայրենիքը, այնտեղ նա կարող է գտնել իր «իսկական դրախտը» հիշողության միջոցով, որը վերադարձնում է կորցրած ժամանակը և արվեստի միջոցով, որը անցողականը բարձրացնում է անանցողականից վեր և նրա տատանվող բնույթին տալիս տևականության պատկեր:

Այսպիսով՝ ժամանակը ոչ միայն այս վեպի գլխավոր թեման է Մուրաուի հիշողությունները որպես կորցրած մանկության, ժամանակի ու ինքնության փնտրտուք, այլև որպես արվեստի գործի սկզբնաղբյուր՝ գտնված ժամանակը որպես գեղեցիկի համար նյութ և խորհրդածությունների առարկա, ինչպես նաև ստեղծագործության ձև: